

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ
ղեկավարության հայտարարությունը

Ներդրումային ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ կապակցությամբ ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, իսկ շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից դրանց բացահայտման համար,
- ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա պատրաստելու համար, քանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ներդրումային ընկերությունների ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,
- Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Գլխավոր տնօրեն
Հայկ Պապյան

Գլխավոր հաշվապահ
Ռուզաննա Ղապալյան

